ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՄԻԽԱԻԼԻ

Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)

ԻԲ.00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Կ Սահակյան
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
ասիստենտ Գ.Կ. Թումանյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2026 թ. մայիսի 29-ին, ժ. 17:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, ԵՊՀ:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. ապրիլի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա.Լ.Ղարագուլյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սոցիալական շարժումների սոցիոլոգիական ուսումնասիրությունն արդի հայաստանյան հասարակությունում արդիական է ինչպես **տեսական,** այնպես էլ **կիրառական** տեսանկյունից:

Տեսական մակարդակում այս հետազոտությունը հնարավորություն է տալիս կոնցեպտուալացնել սոցիալական շարժումները հայկական համատեքստում, լրացնել դրանց համակարգային ուսումնասիրությունների բացը, ինչպես նաև մեկնարկային կետ հանդիսանալ հետագա հետազոտությունների համար, որոնք նպատակ կունենան կենտրոնանալ սոցիալական շարժումների և սոցիալական բողոքի ուսումնասիրությունների վրա հայաստանյան հասարակությունում: Բացի այդ, նման ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել հայաստանյան իրականության համատեքստում սոցիալական շարժումների ներուժը՝ հասկանալով, թե ինչպիսի հնարավորություններ և ռիսկեր են ստեղծում սոցիալական շարժումները, ինչ պայմաններ են անհրաժեշտ դրանց արդյունավետ գործառնության համար:

Կիրառական տեսանկյունից աշխատանքը արդիական է, քանի որ թույլ է տալիս ստանալ ոչ միայն ակադեմիական գիտելիք սոցիալական շարժումների վերաբերյալ, այլև կիրառել այն սոցիալական փոփոխությունների, մասնավորապես՝ սոցիալական բողոքի կառավարման ոլորտում: Ատենախոսությունը թույլ է տալիս հասկանալ սոցիալական շարժումների առաջացման և ծավալման մեխանիզմները, դիտարկել դրանց դինամիկան արդի հայաստանյան հասարակությունում, մշակել տարաբնույթ /քաղաքացիական, բնապահպանական, ֆեմինիստական, քաղաքաշինական և այլն/ սոցիալական շարժումների արդյունավետ կառավարման մոտեցումներ:

Օբյեկտ. Արդի հայաստանյան հասարակությունը հետանկախության փուլում:

Առարկա. Արդի հայաստանյան հասարակությունում դրսևորված սոցիալական շարժումների կառուցվածքը, դինամիկան և հիմնական բնութագրիչները:

Աշխատանքի շրջանակում դիտարկվել է շարժման երեք դեպք՝ Ֆեմինիստական, ուրբանիստական և էկոլոգիական շարժումներ: Որպես ֆեմինիստական շարժման դեպք ընտրվել է «Ընդդեմ ընտանեկան բռնության» շարժումը, ուրբանիստական շարժման դեպք հետազոտվել է «Փրկե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը»[1], որպես էկոլոգիական շարժում հետազոտվել է «Փրկե՛նք Թչռկանի ջրվեժը»[2]:

---

[1] Շենքը կառուցվել էր 19-րդ դարի վերջին՝ մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների կողմից, ովքեր քաղաքային դումայի անդամներ են եղել: Նրանք մեծ ներդրում են կատարել քաղաքի պատմության մեջ, մասնավորապես նրանց շնորհիվ 1911 թվականին Երևանն առաջին անգամ ապահովվեց խմելու ջրով: Սովետական Հայաստանում Աֆրիկյանների ունեցվածքը ազգայանցվեց՝ 1926 թվականին շենքը պետականացվել է խորհրդային իշխանությունների կողմից: Շենքը որոշվել է ապամոնտաժել՝ փողոցի ընդլայնման և դրա վայրում հյուրանոցի կառուցման նպատակով:

[2] Ջրվեժը գտնվում է Լոռու մարզում, այն ՀՀ-ի ամենամեծ ջրվեժներից մեկն է: Ջրվեժի մոտ փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցումը սպառնում էր ջրվեժի գոյությանը և տեղանքի էկոհամակարգին:

Ատենախոսության նպատակն է դուրս բերել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների դինամիկան, կառուցվածքը, բնութագրիչները, զարգացման մեխանիզմները և ազդեցության հնարավորությունները/ռիսկերը:

Ատենախոսության նպատակից ելնելով՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. դասակարգել և վերլուծել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները,
2. դուրս բերել սոցիալական շարժումների հիմնական բնութագրիչները, կառուցվածքը և գործառույթները,
3. պարզել սոցիալական շարժումների առաջացման պատճառները և դինամիկան Հայաստանում,
4. դուրս բերել հետանկախության հայաստանյան հասարակությունում ֆեմինիստական, էկոլոգիական, ուրբանիստական շարժումների առանձնահատկությունները,
5. պարզել Հայաստանում սոցիալական շարժումների արդյունավետությանը նպաստող սոցիալական-քաղաքական գործոնները,
6. կանխատեսել Հայաստանում սոցիալական շարժումների զարգացման հնարավոր միտումները:

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը:

Սոցիալական շարժումների ուսումնասիրության բազմաթիվ տեսական և մեթոդական աշխատանքներ են գրվել: Սահմանափակված լինելով ատենախոսության տրամաբանությամբ և ծավալով՝ ներկայացվելու են սույն հետազոտության համար առավել կարևորները:

Սոցիալական շարժումների ուսումնասիրման առաջին սոցիոլոգիական փորձերը սկիզբ են առնում անվանի սոցիոլոգներ Հերբերտ Բլումերի, Ռալֆ Տյորների, Լյուիս Կիլլիանի աշխատություններից[3]: Այս սոցիոլոգները հետազոտում էին սոցիալական շարժումների էությունը և առաջացման պատճառները՝ մեկնարկելով դրանք կոլեկտիվ վարքի տեսությունից: Ռոբերտ Գառը[4] «Ինչո՞ւ են մարդիկ ապստամբում» աշխատանքում անդրադառնում է սոցիալական շարժումների առաջացման պատճառներին հարաբերական զրկման տեսանկյունից:

[3] Տե՛ս Blumer H. (1951). Collective Behavior: Principles of Sociology, New York; Turner R., Killian L. (1987). Collective Behavior, Englewood Cliffs, N.J.: Prentice Hall.

[4] Տե՛ս Gurr R.T (1970). Why men rebel? Princeton University Press, Routledge.

Նեյլ Սմելզերը և Պյոտր Շտոմպկան էականորեն վերափոխել են սոցիալական շարժումների մասին գոյություն ունեցող պատկերացումները՝ տեղափոխելով դրանք ֆունկցիոնալիզմի դաշտ և առաջ քաշելով կառուցվածքային լարվածության գաղափարը[5]:

Սոցիալական շարժումների ուսումնասիրությունը ռեսուրսների մոբիլիզացման տեսության շրջանակներում մեծապես իրականացվեց հետազոտողներ Դուգ ՄքԱդամի, Մայեր Զալդի, և Ջոն Մքքարթի ջանքերով[6]:

Չարլզ Թիլլին, Դեվիդ Մեյերը, Սիդնի Թերրոուն հիմք դրեցին սոցիալական շարժումների դիտարկմանը քաղաքական գործընթացների և ինտիտուտների փոխհարաբերությունների տեսանկյունից[7]:

Սոցիալական շարժումների ուսումնասիրությանն անդրադարձել է նաև Ուլրիխ Բեկը[8]՝ «Ռիսկի հասարակություն. այլ մոդեռնի ճանապարհին» գրքում՝ դիտարկելով դրանք իբրև արդի հասարակություններում առաջացող ռիսկերի արձագանք:

Ալեն Տուրենը[9] «նոր» և «հին» շարժումների տիպաբանություն է առաջարկում՝ հիմքում դնելով սոցիալական շարժման առաջացման արժեքները: Ալբերտո Մելուչչին[10] առաջ է քաշում ինքնության գաղափարը, առանց որի սոցիալական շարժման գոյությունը անհնար է պատկերացնել: Մանուել Կաստելսը[11], նույնպես, դիտարկում է ինքնությունը որպես սոցիալական շարժման կարևորագույն և անհրաժեշտ բաղադրիչ:

Սոցիալական շարժումների զարգացման փուլերը և կառուցվածքը ուսումնասիրվել են այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Լյութեր Գերլախը, Կրեյգ Ջենկինսը, և այլոք[12]:

Սոցիալական շարժումների մեթոդաբանական ուսումնասիրության գործում զգալի ներդրում ունեցան Դեվիդ Մնոուն, Ուիլյամ Գեմսոնը, Դոնատելլա Դելա Պորտեն, Մարիո Դիանին, Բերթ Կլանդերմանսը, Ֆիլիպ Բալսիգերը, Ալեքսանդրե Լամբելետը և այլոք[13]:

---

[5] Տե՛ս Sztomka P. (1996). Sociology of social change. M. Aspect Press.; Смелзер Н. (1998). «Социология» М.; Феникс.

[6] Տե՛ս McAdam, D., McCarthy, J.D. and Zald, M.N., (1988). Social movements in Smelser. N.J. (ed.), Handbook of Sociology, Beverly Hilld London.

[7] Տե՛ս Tilly C (2004). Social Movements, 1768–2004. Boulder: Paradigm Publishers; Meyer D. S., Tarrow S. (1998). Movement society: Contentious politics for a new century, Rowman and Littlefield Publishers, USA

[8] Տե՛ս Бек У. (2000). Общество риска. На пути к другому модерну, М., Прогресс-традиция.

[9] Տե՛ս Touraine A. (1985). An Introduction to the Study of Social Movements:/ Sociological Research, Vol. 52, № 4, pp.750.

[10] Տե՛ս Melucci A. (1988). Getting Involved: Identity and Mobilization in Social Movements: International Social Movements Research, Vol. 1, Jai Press Inc., England.

[11] Տե՛ս Castells M. (2012). Networks of outrage and hope: Social movements in the Internet age (2nd ed.). Cambridge, U.K.

[12] Տե՛ս Gerlach, L. P. (2001). The structure of social movements: environmental activism and its opponents. In J. Arquilla & D. Ronfeldt (Eds.), Networks and Netwars: The Future of Terror, Crime, and Militancy (pp. 289–310) RAND Corporation; Jenkins, J. C., Wallace, M., & Fullerton, A. S. (2008). A Social Movement Society? A Cross-National Analysis of Protest Potential on JSTOR. International Journal of Sociology, N3 pp. 12-35.

[13] Տե՛ս Snow D. A., Della Porta D., Klandermans B., McAdam D., (2013). *Case Studies and Social Movements., // The Wiley-Blackwell Encyclopedia of Social and Political Movements.;* Diani M. (1992), The concept of social

Ռուսական սոցիոլոգիական դպրոցի շրջանակներում սոցիալական շարժումները տարբեր դիտակետերից ուսումնասիրել են Օ. Յանիցկին, Կ. Կլեմենտը, Ե. Զդրավոմիսլովան, Գ. Դիլիգենսկին, Ս. Ֆրոլովը[14], և այլոք:

Հայ հեղինակների շրջանում սոցիալական շարժումները, նույնպես, ուսումնասիրվել են առանձին տեսանկյուններից: Հատկանշական են անվանի սոցիոլոգ, պրոֆեսոր Լ. Հարությունյանի բազմաթիվ հարցազրույցներ Հայաստանում հետանկախության փուլում տեղի ունեցած սոցիալական շարժումների դինամիկայի և ներքին պատճառների մասին: Լ. Հարությունյանի կարծիքով՝ Հայաստանում սոցիալական շարժումների առաջացման հիմնական պատճառներից է քաղաքական ուժերի և ինստիտուտների հանդեպ վստահության անկումը[15]: Լ. Հարությունյանի կարծիքով, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը խթանում է հասարակության համախմբումը, բայց արտաքին սպառնալիքի շուրջ՝ միաժամանակ սահմանափակելով ներքին քննադատական օրակարգերի զարգացումը և ընդդիմադիր շարժումների հնարավորությունները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու են սոցիալական շարժումները պատերազմող հասարակություններում հաճախ կառուցվում անվտանգության, պետականության կամ զոյաբանական սպառնալիքների շուրջ և ինչ կառուցվածքային սահմանափակումների են դրանք բախվում իրենց պահանջներն առաջ քաշելիս:

Պրոֆեսոր Ա. Մկրտիչյանը «կառավարվող քաոսի» տեսության միջոցով սոցիալական շարժումների վերլուծության համար կարևոր շրջանակ է առաջարկում՝ դիտարկելով հետխորհրդային հասարակությունները որպես համակարգեր, որտեղ անկայունությունը ոչ միայն ճգնաժամային վիճակ է, այլև հասարակության կառավարման գործիք: Հեղինակի մոտեցմամբ՝ քաղաքական և սոցիալական լարվածությունը կարող է վերահսկվել և ուղղորդվել իշխող էլիտաների կամ արտաքին դերակատարների կողմից՝ պահպանելով համակարգի վերահսկելիությունը, բայց միաժամանակ թույլ չտալով դրա լիարժեք ինստիտուցիոնալացում կամ ժողովրդավարական կայունացում: Այս տեսանկյունից սոցիալական շարժումները հայտնվում են այնպիսի միջավայրում, որտեղ ինքնաբուխ

---

movement, Sage, Vol.40, 1-25.; Della Porta D. (2014). Social Movement Studies and Methodological Pluralism: An Introduction. *Methodological practices in social movement research* (eds. Della Porta, D.), Oxford, pp. 1-20.; Balsiger, P., & Lambelet, A. (2014). Participant Observation // D. Della Porta, *Methodological Practices in Social Movement Research* (pp. 144-172). Oxford: Oxford University Press., Gamson W. «Constructing social protest» ed. Johnston H.; Klandermand B. UCL Press, 1995 pp. 85-107.

14 Տե՛ս Клемент К. (2010) и др. От обывателей к активистам. Зарождающиеся социальные движения в современной России. М.: Три квадрата; Яницкий О. (2011) Социальные движения и теория фрейминга // Российское общество социологов; Здравомыслова Е. (1998) Социология общественных движений – становление нового направления. Социология в России / под ред. В.А. Ядова. М.: ИС РАН, Дилигенский Г.Г. (1994) Движения как субъект социально-политической психологии. М.: Наука.; Фролов С. (1994). «Социология» М.: Наука.

[15] Տես՛ Civilnet- ին տրված հարցազրույցում, https://url-shortener.me/6XMS, ըստ 10.12.2025

մոբիլիզացիան հաճախ ներքաշվում է արդեն գոյություն ունեցող ուժային ու քաղաքական խաղի տրամաբանության մեջ: «Կառավարվող քաոսի» հայեցակարգը հնարավորություն է տալիս բացատրել, թե ինչու որոշ շարժումներ արագ ապամոբիլիզացվում են կամ վերափոխվում քաղաքական էլիտայի պայքարի գործիքի:

Ա. Աթանեսյանը դիտարկել է 2018 թ. «Թավշյա հեղափոխությունը» որպես հասարակական կուտակված դժգոհության արտահայտման և քաղաքացիական շարժման օրինակ, որը պայմանավորված էր ինչպես ներքին գործընթացներով /այդ թվում՝ սոցիալական անհավասարությամբ, կոռուպցիայով, անվստահությամբ/, այնպես էլ արտաքին միջամտության մեխանիզմներով, և առաջին անգամ Հայաստանում ցուցադրեց հանրային մոբիլիզացման համար համացանցային տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը[16]:

Ա. Իշխանյանի «Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում» (2015) հետազոտությունը նվիրված է քաղաքացիական նախաձեռնությունների ուսումնասիրությանը, դրանց տեղական առանձնահատկություններին համաշխարհային արդի շարժումների համատեքստում[17]: Ա. Թադևոսյանը «Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում» գրքում անդրադառնում է քաղաքացիական նախաձեռնությունների դերակատարմանը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում[18]:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:

Աշխատանքը հիմնվում է կոնստրուկտիվիստական իմացաբանության վրա և կիրառում է սոցիալական շարժումները մեկնաբանող տեսական մոտեցումներ, մասնավորապես՝ **Քաղաքական գործընթացի տեսությունը**: Այս իմացաբանության, ինչպես նաև տեսության շրջանակում առանցքային դեր է ստանում սոցիալական շարժումների ոչ թե օբյեկտիվ, այլ **ինտերսուբյեկտիվ կառուցվածքի** ուսումնասիրությունը: Շարժումները դիտարկվում են որպես սոցիալական դերակատարների կողմից *իմաստավորված և կառուցակցված* սոցիալական երևույթ: Այս առումով կարևորվում է սոցիալական շարժման մասնակիցների ինքնությունը, արդարության ընկալումները, ինչպես նաև այն նարատիվները, որոնց միջոցով շարժումների մասնակիցները սահմանում և լեգիտիմիզացնում են իրենց խնդիրները, մոբիլիզացնում են հանրությանը և կառուցում իրենց ռազմավարությունները արտաքին միջավայրի հետ փոխազդելով: Համապատասխանաբար այս իմացաբանական հիմքերին կիրառվել են **խորին հարցազրույցի** և **նարատիվ հարցազրույցների, փաստաթղթերի վերլուծության** մեթոդները

---

[16] Տե՛ս Атанесян А. (2018). “Бархатная революция” в Армении: потенциал, достижения и риски политико-протестной активности /Polis. Political Studies, No. 6. P. 80-98

[17] Տե՛ս Իշխանյան Ա. (2018). Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում/ Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա/ Երևան, 488-490

[18] Տե՛ս Թադևոսյան Ա. (2013). Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում, Երևան:

որպես տեղեկատվության հավաքման առաջնային մեթոդներ։ Միևնույն ժամանակ, գիտակցելով սոցիալական միջավայրի կարևորությունը սոցիալական շարժումների ուսումնասիրության պարագայում, իրականացվել է նաև **ՀՌԿԿ Կովկասյան բարոմետր 2021-2022, 2024 քանակական հետազոտության երկրորդային տվյալների վերլուծություն**, հասկանալու համար այն ընդհանուր սոցիալական տրամադրությունները հայաստանյան հասարակությունում, որոնք, մի կողմից, ստեղծում են սոցիալական շարժումների համար բարենպաստ կամ ոչ բարենպաստ պայմաններ, մյուս կողմից՝ հանդիսանում են արդեն իսկ գոյություն ունեցած սոցիալական շարժումների հետևանք։

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը։

Ատենախոսությունում առկա են նորույթ հանդիսացող մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. քննադատական վերլուծության են ենթարկվել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները,
2. մշակվել է սոցիալական շարժման այլընտրանքային սահմանում,
3. դուրս են բերվել արդի հայաստանյան հասարակությունում տեղի ունեցած սոցիալական շարժումների ծագումն ու դինամիկան,
4. կազմվել է ՀՀ հետանկախության փուլում տեղի ունեցած սոցիալական շարժումների ժամանակագրությունը, սահմանվել են տեսակները,
5. վերհանվել է սոցիալական շարժումների կոմպենսատոր գործառույթը՝ իբրև պետության կողմից չիրականացված կամ թերի իրականացված գործառույթների բացի լրացում,
6. առանձնացվել և բնութագրվել է արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ՝ «ֆրագմենտար» սոցիալական շարժման տեսակը,
7. բացահայտվել են և դասակարգվել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների ծավալմանը խոչընդոտող գործոնները,
8. դուրս են բերվել այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են սոցիալական շարժումներին նպատակին հասնելու համար,

Ատենախոսական հետազոտության հիմնական վարկածները։

- Սոցիալական շարժման առաջացման համար բավարար չէ սոցիալական անարդարության ընկալումը. անհրաժեշտ է, որ այն ընկալվի իբրև կոլեկտիվ գործողության միջոցով հաղթահարելի իրավիճակ և ստանա լեգիտիմություն։
- Սոցիալական շարժումները կոմպենսատոր գործառույթ են իրականացնում այն դեպքում, երբ պետական ինստիտուտները չեն կարողանում կարգավորել սոցիալական խնդիրները։
- Հասարակության մեջ բողոքի ներուժի և դրա փաստացի իրացման միջև եղած խզումը ունի կառուցվածքային, այլ ոչ թե պատահական բնույթ։ Մասնավորապես՝ այն

պայմանավորված է քաղաքացիական հասարակության կազմակերպական թուլությամբ և քաղաքական հնարավորությունների կառուցվածքի փակվածությամբ:

- Այն սոցիալական շարժումները, որոնք ձևավորվել են հիմնականում արտաքին կազմակերպությունների, ցանցերի կամ ֆինանսական ռեսուրսների ազդեցությամբ, ունեն սահմանափակ հասարակական աջակցություն և ցածր մոբիլիզացիոն ներուժ՝ համեմատած ներքին սոցիալական պահանջներից բխող շարժումների հետ:
- Սոցիալական բողոքի դրսևորման հակակառավարական ցույցերին միանալու հիմնական պատճառները տնտեսական բնույթի չեն:

Պաշտպանության հանվող դրույթները.

- Արդի հայաստանյան հասարակությունում ձևավորվել է հակասական իրավիճակ. գոյություն ունի հանրային բողոքի զգալի ներուժ, սակայն այն մնում է չիրացված: Չնայած առանձին հաջողված դեպքերի (օր.՝ 2025թ. «Դեմ եմ տրանսպորտի թանկացմանը»), սոցիալական շարժումները Հայաստանում ունեն սահմանափակ արդյունավետություն և մեծ մասամբ չեն հանգեցնում կայուն, համակարգային փոփոխությունների[19]:
- Հայաստանում սոցիալական շարժումների առաջացման հիմնական պատճառները թաքնված են սոցիալական անարդարության ընկալման և դրա վերականգման ձգտման մեջ, ինչպես նաև քաղաքացու դերի կարևորության գիտակցման և այդ դերի կիրառման հետ: Այս երկու մոտիվացիաները, լինելով փոխկապակցված, տարբեր ուժգնությամբ են արտահայտվում ուսումնասիրված շարժումների դեպքում. ֆեմինիստական շարժման դեպքում առաջնային շարժիչ ուժ է հանդիսացել գենդերային խտրականությունների և բռնության դեմ պայքարը՝ ձգտումը վերականգնել արդարությունը, որը հաճախ հիմնված է սեփական կամ մտերիմների բացասական փորձի վրա: Մինչդեռ էկոլոգիական և ուրբանիստական շարժումների դեպքում ավելի վառ արտահայտված է եղել քաղաքացու՝ որպես որոշումների կայացման մասնակցի ինքնագիտակցությունը:
- Հայաստանում սոցիալական շարժումների կորիզի մոբիլիզացման հիմնական մեխանիզմը սոցիալական կապիտալն է: Մասնավորապես՝ «թույլ» կապերը, որոնք ըստ Մ. Գրանովետրի բնութագրվում են շփումների ցածր ինտենսիվությամբ և քիչ էմոցիոնալ ներգրավվածությամբ, ավելի արդյունավետ են աշխատում շարժման կողմնակիցներին մոբիլիզացնելու համար, քանի որ դրանք կամուրջ են հանդիսանում տարբեր սոցիալական խմբերի միջև, որոնք նախկինում իրար հետ փոխազդեցություն չեն ունեցել Եվ քանի որ «թույլ» կապերը միշտ ավելի շատ են (ծանոթներ, գործընկերներ, այլ կապեր), սա նպաստում է տեղեկատվության և մոբիլիզացման լայն տարածմանը տարբեր սոցիալական խմբերում՝ ներգրավելով հավելյալ ռեսուրսներ: Միևնույն ժամանակ «ուժեղ» կապերը, որոնց բնորոշ է ինտենսիվ շփումներ, բարձր էմոցիանալ ներգրավվածություն, վստահության և փոխօգնության բարձր մակարդակ, արդյունավետ գործում են միայն խիտ

[19] 2000-ականներից հետո սոցիալական շարժման 25 դեպք է եղել, որից հաջողել են 9-ը:

և սահմանափակ ցանցերում (ընտանիքի անդամներ, ընկերներ)։ Արդյունքում դրանք սահմանափակ արդյունավետություն ունեն լայն մոբիլիզացիայի տեսանկյունից, սակայն կարևոր դեր են խաղում շարժման ներսում վստահության պահպանման, ռազմավարական պլանավորման և կոորդինացիայի ապահովման գործում։

- Սոցիալական շարժումների՝ լայն հասարակական մոբիլիզացման գլխավոր գործիքը վիրտուալ սոցիալական ցանցերն են, մասնավորապես՝ Ֆեյսբուքը, որը, նաև ստեղծում է շարժման համար տարբեր ռիսկեր։ Լինելով թույլ կարգավորվող տեղեկատվական միջավայր՝ այն հնարավորություն է տալիս տարբեր դերակատարներին ազդեցություն ունենալ շարժման օրակարգի ձևավորման վրա՝ տարածելով ապատեղեկատվական բովանդակություն, խեղաթյուրելով շարժման նարատիվը և այլն։ Բացի այդ, հարթակի ալգորիթմական տրամաբանությունը նպաստում է բովանդակության արագ և երբեմն չվերահսկվող տարածմանը, ինչը նույնպես մեծացնում է ապատեղեկատվության ռիսկը։ Այս հանգամանքները կարող են հանգեցնել շարժման վարկաբեկմանը և դրա արդյունավետության նվազմանը։ Այս երևույթն առավել ակնառու է ֆեմինիստական շարժման դեպքում, երբ շարժման նարատիվները տարածվում են նաև «հակադիր» դիրքորոշում ունեցող խմբերի կողմից՝ բացասական երանգավորմամբ և պիտակավորմամբ։ Մասնավորապես, շարժման օրակարգը հաճախ վերարտադրվում է իբրև «հայ ավանդական ընտանիքի սպառնալիք», «արևմտյան արժեքների պարտադրում» կամ «ազգային ավանդույթներին հակասող» բնորոշումներով։ Արդյունքում, նույն նարատիվը շրջանառվում է տարբեր մեկնաբանություններով՝ պայմանավորելով շարժման հանրային ընկալումը։
- Այն սոցիալական շարժումները, որոնց հանրային պահանջը ձևավորվում է միկրո մակարդակում, ավելի արդյունավետ են մոբիլիզացնում հասարակությանը և հասնում են արդյունքի, քան այն շարժումները, որոնց նախաձեռնությունը ծնվում է միջին մակարդակում։ Այս օրինաչափությունը հստակ երևում է ուսումնասիրված դեպքերի վերլուծությունից. «Փրկե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը» և «Փրկե՛նք Թռչկանի ջրվեժը» շարժումներում պահանջը ծնվել է անմիջականորեն քաղաքացիների կողմից՝ ներքևից վերև սկզբունքով, ինչն ապահովել է ինչպես համեմատաբար լայն մոբիլիզացիա, այնպես էլ շարժման ներքին համախմբվածությունը և միասնականությունը։ Միևնույն ժամանակ, ֆեմինիստական շարժման դեպքում, շարժման օրակարգը առաջ տանող հիմնական ուժը իրավապաշտպան ՀԿ-ներն են, դրանց հետ առնչություն ունեցող ակտիվիստները կամ խմբերը։ Այս շարժման պարագայում միկրո մակարդակում տեսանելի են որոշ դժվարություններ, օրինակ՝ սեփական ինքնությունը հրապարակայնորեն չբացահայտելու ցանկությունը որոշ մասնակիցների շրջանում, հանրային միջոցառումներին չմասնակցելու ցանկությունը, օրակարգային և ռազմավարական տարաձայնությունները, և այլն։ Արդյունքում մեզո մակարդակում տարվող ջանքերը շատ ավելի կազմակերպված են և միասանական՝ ի տարբերություն

միկրոմակարդակի: Որպես արդյունք, այս շարժումը ավելի դժվար է հասնում հանրային մոբիլիզացիայի և հասարակական պակաս տեսանելիություն ունի, քան շարժումների մյուս երկու դեպքը:

- Սոցիալական շարժումների դինամիկան խոչընդոտվում է ներքին և արտաքին գործոնների համակցված ազդեցությամբ, որոնք սահմանափակում են շարժումների կայունությունն ու հաղթանակի հնարավորությունը: Ներքին խոչընդոտների շարքում են այն գործոնները, որոնք բխում են հենց շարժման առանձնահատկություններից: Դրանք տարբեր են շարժումներից յուրաքանչյուրի դեպքում: Ֆեմինիստական շարժման պարագայում դրանք հիմնականում կապված են ընդհանուր օրակարգի վերաբերյալ համաձայնության բացակայության հետ, ինչպես նաև որոշ մասնակիցների շրջանում հրապարակայնորեն ֆեմինիստական ինքնության բացահայտելու չկամությունը, ակտիվիստական խմբերի միջև թույլ համագործակցային կապերի առկայությունը:

Ուրբանիստական շարժման դեպքում ներքին խոչընդոտներն առաջին հերթին արտահայտվում են կազմակերպչական անհամախմբվածությամբ, մասնակիցների սահմանափակ թվով և մոբիլիզացիոն արդյունավետ ռազմավարությունների բացակայությամբ:

Էկոլոգիական շարժումը ևս բախվել է մասնակիցների թվաքանակի խնդրին, սակայն այս շարժման դեպքում առանձնահատուկ խնդիր է եղել նաև առաջադրված պահանջների անհստակությունը, ինչը դժվարացրել է շարժման ուղղորդումն ու հասարակական աջակցության համախմբումը: Թվարկված ներքին խոչընդոտները կարող են մասամբ կամ ամբողջությամբ հաղթահարվել հենց շարժումների գործունեության արդյունքնում:

Արտաքին խոչընդոտները անկախ են սոցիալական շարժումներից, դրանք պայմանավորված են ընդհանուր սոցիալ-քաղաքական և մշակութային միջավայրով, որտեղ զարգանում են սոցիալական շարժումները և այդ պատճառով որոշ դեպքերում նույնական են: Ֆեմինիստական շարժման դեպքում հնարավոր է առանձնացնել հետևյալները՝ պահպանողական միջավայրը, հակագենդերային արշավների գոյությունը, մշակութային փոփոխությունների երկարատևությունը, պատերազմի հետևանքով հասարակական օրակարգերի փոփոխությունը և այլն: Ուրբանիստական շարժման դեպքում արտաքին խոչընդոտներից է տնտեսական շահի գերակայությունը, թերի օրենսդրական կարգավորումները, շարժման կերպարի արժանահավատության խնդիրը, որը հանգում է նաև ներքևից եկող փոփոխությունների հանդեպ անվստահությանը: Էկոլոգիական շարժման դեպքում արտաքին խոչընդոտներից են եղել հասարակական դիմադրությունը և շարժման հանդեպ վստահության պակասը, իրավական ակտերի և կարգավորումների հակասական բնույթը և տնտեսական շահի առաջնայնությունը:

- Քաղաքական գործընթացի տեսության հիմնադիր, անվանի սոցիոլոգ Չարլզ Թիլլի կողմից առաջկվող WUNC (արժանահավատություն/ worthiness, միասնականություն/unity, անդամների քանակ/ number, նվիրվածություն/ commitment) մոդելը ամբողջությամբ թույլ չի տալիս բացատրել, թե միանման պայմաններում ինչու են որոշ շարժումներ հասնում

հաջողության՝ իրացնում են իրենց սահմանած նպատակը, իսկ որոշները՝ ոչ։ Ըստ այդմ՝ հիմնվելով դաշտային տվյալների վրա, ինչպես նաև գրականության վերլուծության վրա առաջարկվում են հավելյալ 4 փոփոխականներ՝ **հստակ նպատակադրում, ներքին համերաշխություն, կազմակերպչական կարողությունների արդյունավետություն և բարենպաստ սոցիալական համատեքստ**, որոնք հանդես են գալիս իբրև այլընտրանքային մոդել, որի միջոցով կարելի է բացատրել սոցիալական, շարժումների հաջողության բանաձևը։

Ատենախոսության հետազոտական արդյունքների տեսական և գործնական նշանակությունը։

Ատենախոսության արդյունքները հնարավորություն են տալիս բացատրելու, թե ինչու են որոշ խմբեր հաջողությամբ կարողանում են հանրայնացնել իրենց խնդիրը և հասնել դրա լուծմանը, մինչդեռ ոչ պակաս հրատապ այլ խնդիրներ կա՛մ ընդհանրապես չեն դառնում հանրային մոբիլիզացման առիթ, կա՛մ դառնալով՝ չեն հաջողվում։ Սոցիալական բողոքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ նաև ոչ միայն բողոքի մասնավոր դեպքերը, այլև ըմբռնել հասարակությունում սոցիալական փոփոխությունների կատարման ընդհանուր տրամաբանությունը և կառավարել այն։ Հետազոտությունը հասցեագրված է ինչպես գիտական հանրույթին, այնպես էլ հանրային կառավարման ոլորտի մասնագետներին, ովքեր կարող են օգտագործել այս աշխատանքի տվյալները և եզրակացություններն իրենց գործունեության մեջ՝ քաղաքականությունների մշակման, հանրային բողոքի կառավարման և սոցիալական կոնֆլիկտների կարգավորման համար։ Ատենախոսության արդյունքները կարող են նաև գործնական նշանակություն ունենալ քաղաքացիական ակտիվիստների համար, ովքեր նախաձեռնում կամ պլանավորում են հանրային մոբիլիզացիա։ Մասնավորապես, ուսումնասիրության մեջ բացահայտված հաջողության պայմաններն ու խոչընդոտող գործոնները կարող են ուղղորդել ակտիվիստներին ռազմավարական որոշումների կայացման գործընթացում՝ օգնելով նրանց ճիշտ գնահատել առկա հնարավորությունները և ռիսկերը։

Հետազոտական արդյունքների փորձարկումը։

Ատենախոսության առանձին բաղադրիչներ ներկայացվել և քննարկվել են գիտաժողովներում, այդ թվում՝ «Ժամանակակից մեդիահաղորդակցությունները թվային աշխարհում» գիտաժողովում /Կազան, 2024թ./, 2024թ. ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի մեթոդաբանական սեմինարում, ապա՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի նիստում /մարտի 19, 2026թ./։ Ատենախոսության բոլոր մասերը հրատարակվել են ութ/8 գիտական հոդվածներում։

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը։ Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երկու գլուխներից (տաս ենթագլուխներից), եզրակացությունից, գրականության ցանկից։ Ատենախոսության ծավալը կազմում է 174 էջ։

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ինչպես նաև ներկայացվում է գիտական բացը, որի լրացմանն է միտված աշխատանքը: Ներածությունում ներկայացվում է պրոբլեմային իրավիճակը, ուսումնասիրվող օբյեկտն, առարկան, սահմանվում է նպատակը, ինչպես նաև դրանից բխող հետազոտական խնդիրները և աշխատանքի վարկածները: Այս բաժնում նաև անդրադարձ է կատարվում թեմայի տեսական հիմքերին և գիտական մշակվածությանը, նկարագրվում են մեթոդաբանական հիմքերը և ներկայացվում են պաշտպանության հանվող դրույթները: Բացի այդ այս բաժնում ներկայացվում են աշխատանքի գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Սոցիալական շարժումների ուսումնասիրման տեսամեթոդաբանական մոտեցումներ», բաղկացած է հինգ ենթագլուխներից: **Առաջին գլխի առաջին ենթագլխում՝** «Սոցիալական շարժումների սահմանումը սոցիոլոգիայում և հարակից գիտություններում», վերլուծվում է տարբեր հեղինակների կողմից առաջարկված սոցիալական շարժումների սահմանումները, ինչպես նաև մատնանշվում են եզրույթի սահմանման կիրառական դժվարությունները՝ պայմանավորված մեթոդաբանական տարբեր խնդիրներով: Ըստ այդմ, հիմնավորվում և ներկայացվում է այլընտրանքային սահմանման անհրաժեշտությունը և այլընտրանքային սահմանումը: Այսպիսով՝ սինթեզելով գիտական գրականությունում առկա մոտեցումներն, առաջարկվել է սահմանել սոցիալական շարժումներն իբրև ոչ ֆորմալ, սոցիալական ցանցի միջոցով իրականացվող անհատների և խմբերի հավաքական գործողության տեսակ, որը ներգրավված է սոցիալական կոնֆլիկտի մեջ և նպատակ ունի փոխել գործող սոցիետալ կարգը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Սոցիալական շարժումների կառուցվածքը և գործառույթները», անդրադարձ է կատարվում սոցիալական շարժումների կառուցվածքային տարրերին, որոնցից են՝ **արժեքները և նորմերը, փոխադարձ սպասումները, փոխազդեցությունները և սոցիալական դերերը:** Այս ենթագլխում քննարկվում են նաև սոցիալական շարժումների հիմնական և լատենտ գործառույթները, որոնց թվում են՝ պրոբլեմային իրավիճակի վերասահմանումը, իրազեկումը, ներկայացուցչականությունը, բողոքի մշակույթի ձևավորումը, և այլն: Գործառույթների համատեքստում շարժումները դիտարկվում են ինչպես իրենց ֆունկցիոնալ, այնպես էլ դիսֆունկցիոնալ դրսևորումների տեսանկյունից:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Սոցիալական շարժումների տիպաբանությունը», վերլուծվում են սոցիալական շարժումների տիպերն ըստ տարբեր հեղինակների տիպաբանությունների: Քննարկվում են այնպիսի սոցիալական շարժումների տիպեր, ինչպիսիք **են հետադիմական, պահպանողական և առաջադեմ** (Լ. Կիլիան), **ընդհանուր, յուրահատուկ և էքսպրեսիվ** (Հ. Բլումեր), **այլընտրանքային, փրկիչ, բարեփոխական և հեղափոխական** (Դ. Աբերլե), **ուտոպիական** (Ս. Ֆրոլով), **հին և նոր** (Ա. Թուրեն) և այլ տիպի

շարժումներ։ Այս ենթագլխում դիտարկվում են նաև **ֆեմինիստական, էկոլոգիական, ուրբանիստական, պացիֆիստական** շարժումները։

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում՝ «Սոցիալական շարժումների դինամիկայի փուլերը», մանրամասն վերլուծվում են սոցիալական շարժումների դինամիկայի փուլերն ըստ տարբեր հեղինակների՝ կենտրոնանալով յուրաքանչյուր փուլում շարժման հետ տեղի ունեցող փոփոխությունների վրա։ Դիտարկվում են այնպիսի հեղինակների աշխատանքներ, ինչպիսիք են Հ. Բլումերը, Ն. Սմելզերը, Չ. Թիլլին. Ջ. Մասիոնիսը, Դ. Դելա Պորտեն և Մ. Դիանին։ Ենթագլուխն անդրադառնում է նաև շարժումների առաջացման և մարման պատճառներին՝ մասնավորապես, կենտրոնանալով այն մոդելների վրա, որոնք բացատրում են սոցիալական շարժումների հաջողության կամ ձախողման մեխանիզմները։ Ենթագլուխն ամփոփվում է «շարժումների հասարակության» հայեցակարգով և Չ. Թիլլիի WUNC մոդելով, որոնք հիմք են հանդիսանում ատենախոսության վերլուծական շրջանակի համար։ Թիլլիի WUNC մոդելը իր մեջ ներառում է 4 փոփոխական՝ **արժանահավատություն/worthiness, միասնություն/unity, քանակ/number և նվիրվածություն/commitment**, որոնց առկայության/բացակայության սկզբունքով բացատրվում էր շարժման հնարավոր հաջողությունը։ Հիմնվելով ստացած դաշտային տվյալների վրա՝ առաջարկում է հավելյալ 4 փոփոխական՝ **նպատակադրում, ներքին սոլիդարություն, կազմակերպչական կարողություններ և սոցիալական միջավայր**, առավել արդյունավետ վերլուծական մոդել կառուցելու և համակարգային բացատրություն տալու համար, թե ինչու որոշ սոցիալական շարժումներ նույն պայմաններում հաջողում են, իսկ որոշները՝ ոչ։

Առաջին գլխի հինգերրորդ ենթագլխում՝ «Սոցիալական շարժումների ուսումնասիրման մեթոդական մոտեցումները», քննարկվում է խնդրի ուսումնասիրության նպատակով կիրառվող հիմնական մեթոդները և մեթոդաբանությունները՝ դիտարկում, հարցում, հարցազրույց, փաստաթղթերի վերլուծություն, հիմնավորված տեսություն, դեպքի հետազոտում՝ մատնանշելով դրանց առավելություններն և սահմանափակումներն։

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում. սոցիոլոգիական հետազոտություն», բաղկացած է հինգ ենթագլուխներից։ **Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Հայաստանյան սոցիալական շարժումների սոցիոլոգիական հետազոտության ծրագիր», ներկայացվում է հետազոտության պրոբլեմը, հիմնավորվում է մեթոդների և ընտրանքի ձևակերպումը, ընտրանքի ծավալի չափի որոշումը, անդրադարձ է կատարվում հետազոտության էթիկական խնդիրներին։

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ֆեմինիստական շարժումն արդի հայաստանյան հասարակությունում», ներկայացվում է ֆեմինիստական շարժման ձևավորումը, զարգացումը և ներկայիս վիճակը արդի հայաստանյան հասարակությունում՝ ընդգծելով

դրա պատմական հիմքերը, կառուցվածքային առանձնահատկությունները, առկա խնդիրները և հնարավորությունները։

Ֆեմինիստական շարժման ակունքները արդի հայաստանյան հասարակությունում կապված են խորհրդային ժամանակաշրջանի հետ, երբ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը ապահովվում էր պետության կողմից իրավական մակարդակում՝ միևնույն ժամանակ պահպանելով ավանդական դերերը։ Պետությունը մի կողմից ներգրավում էր կանանց հասարակական կյանքում, իսկ մյուս կողմից պաշտպանում խորհրդային ընտանիքում կնոջ ավանդական դերը։

Անկախացման տարիներին Հայաստանում սկսեցին ձևավորվել կանանց կազմակերպություններ, որոնք նպատակ ունեին սատարելու կանանց դերի ընդլայնմանը պետության և հասարակության բոլոր բնագավառներում։ 2000-ականներից սկսած ֆեմինիստական շարժումը Հայաստանում վերակազմավորվեց՝ մեծապես միջազգային կազմակերպությունների և արևմտյան արժեքների ազդեցությամբ։ Ստեղծվեցին բազմաթիվ ՀԿ-ներ և նախաձեռնություններ, որոնք զբաղվում են կանանց իրավունքների պաշտպանությամբ, գենդերային հավասարության խթանմամբ, ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելմամբ և իրազեկման բարձրացմամբ։

ֆեմինիստական շարժումը Հայաստանում բնութագրվում է երկակիությամբ։ Մի կողմից՝ մեզո մակարդակում (ՀԿ-ներ, նախաձեռնություններ) այն իրականացնում է համակարգված գործունեություն՝ ուղղված կանանց իրավունքների պաշտպանությանը, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելմանը։ Մյուս կողմից՝ միկրո մակարդակում այն մասնատված է. բացակայում է միասնական օրակարգը, թույլ են ներքին կապերը, և որոշ մասնակիցներ չեն ցանկանում նույնականանանալ շարժման հետ՝ թաքցնելով ֆեմինիստական շարժման հանդեպ իրենց համակրանքն ու աջակցությունը՝ խուսափելու հասարակության մեջ հնարավոր բացասական վերաբերմունքից և կարծրատիպերից։

Շարժման մասնակիցների հիմնական մոտիվացիան սոցիալական անարդարության դեմ պայքարն է, քանի որ շատերը կա՛մ անձնապես են բախվել բռնության, կա՛մ ականատես են եղել բռնության դեպքերի, ուստի և որոշել են պայքարել այդ երևույթի դեմ։ Շարժման մասնակիցները տարբեր են իրենց մոտեցումներով՝ պայմանականորեն բաժանվելով «չափավոր» և «ծայրահեղական» խմբերի, և ունեն տարբեր պատկերացումներ այն մասին, թե ինչպես պետք է զարգանա շարժումը, ինչ նմապատկներ հետապնդի, ինչ ռազմավարություն կիրառի։

Այս ենթագլխում շարժումը վերլուծվում է WUNC մոդելի և հավելյալ փոփոխականների պրիզմայի ներքո՝ մատնանշելով շարժման հաջողության նախապայմանները և խոչընդոտները։ Շարժման խոչընդոտների շարքում դիտարկվում են և՛ արտաքին, և՛ ներքին գործոնները, որոնցից առավել ուշագրավ են ֆեմինիստական ընդհանուր օրակարգի բացակայությունը, միկրո մակարդակում շարժման ֆրագմենտացիան և երբեմն թաքցվող ինքնությունը, պահպանողական միջավայրը, հակագենդերային արշավները։

Ենթագլխում ֆեմինիստական շարժումը վերլուծվում է չորս հիմնական փոփոխականների միջոցով։ Նպատակադրման մակարդակում ակտիվիստների միջև օրակարգային տարաձայնություններ են առկա, ինստիտուցիոնալ մակարդակում նկատվում է համեմատաբար միասնական ուղղվածություն կանանց իրավունքների պաշտպանության շուրջ։ Միևնույն ժամանակ, ներքին սոլիդարությունը և կոլեկտիվ ինքնությունը թույլ են։ Կազմակերպչական կարողությունները սահմանափակ են՝ միասնական կառուցվածքի, լիդերության և ռեսուրսների համադրման բացակայության պատճառով, իսկ սոցիալական կոնտեքստը հիմնականում անբարենպաստ է՝ հասարակական դիմադրության և պիտակավորման բարձր մակարդակի պատճառով։ Թերևս, կազմակերպչական ջանքերը մեզո մակարդակում կոմպենսացնում են միկրո մակարդակում առկա նշված խնդիրները, ինչի շնորհիվ էլ շարժումը կարողացել է հասնել իր սահմանած նպատակին։

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Ուրբանիստական շարժումն արդի հայաստանյան հասարակությունում. «Պահպանենք Աֆրիկյանների ակումբի շենքը» դեպքի օրինակով», ներկայացնում է ուրբանիստական շարժման ձևավորումը և առանձնահատկությունները արդի հայաստանյան հասարակությունում։

Քաղաքային շարժումները ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ արդի հայաստանյան հասարակությունում ձևավորվում են որպես արձագանք քաղաքային միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին, որոնք պայմանավորված են մասնավոր կապիտալի գերակայությամբ և պետական կառույցների ոչ արդյունավետ գործունեությամբ։ Այս շարժումները հիմնականում ուղղված են քաղաքային տարածքի պահպանությանը, տեղական ինքնության պաշտպանությանը և քաղաքացիների մասնակցության բարձրացմանը քաղաքային կառավարման գործընթացներում։ Դրանց ակտիվացումը հատկապես վերջին տասնամյակում պայմանավորված է շինարարական միջամտությունների աճով, ազգային ինքնության ուժեղացմամբ, քաղաքացիական գիտակցության զարգացմամբ և սոցիալական մեդիայի ազդեցությամբ։

Հայաստանում քաղաքային շարժումները կենտրոնացած են հիմնականում Երևանում, որտեղ բնակչության խտությունը, ռեսուրսների առկայությունը և քաղաքային միջավայրի ինտենսիվ փոփոխությունները նպաստում են կոնֆլիկտների առաջացմանն ու ակտիվիզմի զարգացմանը։

«Պահպանենք Աֆրիկյանների ակումբի շենքը» շարժումը հանդիսանում է քաղաքային շարժման տիպական օրինակ, որտեղ հստակ արտահայտվում է հանրային շահի և մասնավոր տնտեսական հետաքրքրությունների միջև սոցիալական կոնֆլիկտը։ Շարժումը ձևավորվեց շենքի ապամոնտաժման վտանգի պայմաններում և միավորեց տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներին՝ ճարտարապետներին, իրավաբաններին, ակտիվիստներին և մշակութային գործիչներին։ Այն ուներ ապակենտրոնացված կառուցվածք՝ առանց հստակ լիդերի, և գործում էր համակարգող խմբի միջոցով։

Շարժման մասնակիցների մոտիվացիան բազմաշերտ էր՝ սկսած կոնկրետ նպատակից (շենքի պահպանում), մինչև ավելի լայն քաղաքացիական մասնակցության և սոցիալական արդարության պահանջներ։ Ժամանակի ընթացքում շարժումը դուրս եկավ նեղ խնդրի շրջանակից և վերածվեց համակարգային խնդիրների դեմ ուղղված բողոքի։

Շարժման ընթացքում կիրառվել են բազմազան մեթոդներ՝ իրավական պայքար, հանրային ակցիաներ, մշակութային միջոցառումներ, մեդիա արշավներ և լոբբինգ։ Շարժումը բնութագրվում էր հստակ նպատակադրումներով, ներքին տարաձայնություններով և տարասեռ գործողություններով՝ համատեղելով հանրային ակցիաները և իրավական մեխանիզմները։ Սակայն, չնայած բարձր կազմակերպչական կարողություններին՝ շարժումը չկարողացավ վերածել այս ռեսուրսները **զանգվածային քաղաքական ճնշման**։

Շարժումը բախվել է մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների՝ այն փոքրաթիվ էր, կիրառվող մոբիլիզացիոն ռազմավարությունները անբավարար էին, ինչպես նաև շարժման արժանահավատության ընկալման խնդիր էր դրված։ Այս ամենին զուգորդվեցին թերի օրենսդրական կարգավորումները, տնտեսական շահի գերակայությունը, և նախադեպի բացակայությունը։

Շարժումը չկարողացավ իրագործել իր նպատակը նեղ իմաստով՝ 19-րդ դարի շենքը ապամոնտաժվեց երկու տարվա պայքարից հետո։ Սոցիալական շարժումը գործառնում էր խիստ անբարենպաստ պայմաններում, ինչի արդյունքում էլ այն չկարողացավ հասնել հաջողության։ Շարժման ձախողումը պայմանավորված էր համակարգային գործոններով, որոնք բնորոշում են ժամանակակից հայաստանյան հասարակությունը։

Ընդհանուր առմամբ, այս դեպքը ցույց է տալիս, որ նույնիսկ բարձր կազմակերպչական կարողությունների դեպքում, շարժումները կարող են ձախողվել, եթե բացակայում են լայն հասարակական աջակցությունը և բարենպաստ սոցիալ-քաղաքական պայմանները։ Միևնույն ժամանակ, նմանատիպ շարժումները, անգամ ձախողվելու դեպքում, կարևոր դեր են խաղում քաղաքացիական հասարակության զարգացման, հանրային խնդիրների բարձրաձայնման և երկարաժամկետ փոփոխությունների ձևավորման տեսանկյունից։

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Էկոլոգիական շարժումն արդի հայաստանյան հասարակությունում. «Պահպանե՛նք Թռչկանի ջրվեժը» դեպքի օրինակով», ներկայացնում է բնապահպանական շարժման ձևավորումը և առանձնահատկություններն արդի հայաստանյան հասարակությունում։

Բնապահպանական շարժումները ժամանակակից հասարակությունների կարևորագույն սոցիալական շարժումներից են, որոնք ձևավորվում են տնտեսական զարգացման և բնապահպանական կայունության միջև հակասությունների պայմաններում։ Հայաստանում դրանց ակտիվացումը պայմանավորված է հատկապես հանքարդյունաբերական և էներգետիկ ծրագրերի տարածմամբ, որոնք հաճախ հակասում են շրջակա միջավայրի պահպանության շահերին։

«Պահպանե՛նք Թռչկանի ջրվեժը» շարժումը ձևավորվեց որպես արձագանք պետական որոշմանը, որը թույլ էր տալիս փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցում բնության հուշարձան հանդիսացող տարածքում: Շարժման հիմքում ընկած էր բնական միջավայրի պահպանության և սոցիալական արդարության պահանջը, որը արագորեն մոբիլիզացրեց ինչպես քաղաքային ակտիվիստներին, այնպես էլ տեղական համայնքների բնակիչներին:

Շարժման կառուցվածքը ապակենտրոնացված էր՝ առանց հստակ առաջնորդի, սակայն այն ուներ ամուր կոլեկտիվ ինքնություն, որը արտահայտվում էր «թռչկանցիներ» ինքնանույնականացմամբ: Մասնակիցների մոտիվացիան բազմաշերտ էր՝ ներառելով կոնկրետ բնապահպանական նպատակը, քաղաքացիական մասնակցության ձգտումը և արդարության վերականգնման պահանջը:

Շարժումը կիրառեց բազմազան և արդյունավետ ռազմավարություններ՝ համատեղելով փողոցային ակցիաները, վրանային նստացույցերը, իրավական մեխանիզմները և հատկապես սոցիալական մեդիայի ակտիվ օգտագործումը: Ֆեյսբուքը դարձավ առանցքային հարթակ՝ ինչպես հանրային իրազեկման, այնպես էլ որոշում ընդունողների վրա ճնշում գործադրելու համար: Շարժման խոսույթը կառուցված էր մի շարք կարևոր նարատիվների շուրջ՝ տնտեսական շահի և բնապահպանության հակադրություն, հասարակության օտարում, պետական համակարգի նկատմամբ անվստահություն և բնապահպանական խնդիրների ընդլայնված ընկալում:

«Թռչկանի» շարժումը հասավ իր անմիջական նպատակին. շինարարությունը կասեցվեց, իսկ ջրվեժը ստացավ պաշտպանված տարածքի կարգավիճակ: Այս հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ հստակ նպատակադրում, ուժեղ ներքին սոլիդարություն, բարձր կազմակերպչական կարողություններով՝ այդ թվում սոցիալական մեդիայի արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև քաղաքական հնարավորությունների պատուհանի ստեղծմամբ: Խնդրի լուծումից հետո շարժման ակտիվությունը աստիճանաբար մարեց, ինչը բնորոշ է նման տիպի շարժումներին: Այնուամենայնիվ, դրա ազդեցությունը չսահմանափակվեց միայն կոնկրետ դեպքով. շարժումը նպաստեց բնապահպանական օրակարգի զարգացմանը, բարձրացրեց քաղաքացիական մասնակցության մակարդակը և ստեղծեց նախադեպ հանրային շահի պաշտպանության համար:

Երկրորդ գլխի հինգերրորդ ենթագլխում՝ «Սոցիալական բողոքի ներուժը. երկրորդային տվյալների ուսումնասիրություն», վերլուծվում են ՀՀ ներկայացուցչական ընտրանքով (N=1561, 2024թ., N=1474, 2022թ,) ՀՌԿԿ Կովկասյան Բարոմետր քանակական հետազոտության արդյունքները: Այս արդյունքները հանդես են գալիս որպես ֆոնային գիտելիք՝ բնութագրելով այն սոցիալական միջավայրը, որտեղ զարգանում են սոցիալական շարժումները: Դրանք հնարավորություն են տալիս վերլուծելու, թե ինչու են մարդիկ պատրաստ բողոքել կառավարության դեմ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս բողոքի ներուժի անկում 2015-ից մինչ այսօր: Այնուամենայնիվ, հարցվողների կեսից

ավելին գտնում են, որ մարդիկ պետք է մասնակցեն կառավարության դեմ բողոքի ցույցերին: Տե՛ս գծապատկեր 1.

Գծապատկեր 1. Պետք է արդյո՞ք մարդիկ մասնակցեն կառավարության դեմ բողոքներին թե՝ ոչ, %



Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կառավարության դեմ բողոքներին մասնակցելու որոշումը պայմանավորված է հարցվողների սեռով, կրթությամբ և բնակավայրի տեսակով ($p<0.01$): Տե՛ս գծապատկեր 2.

Գծապատկեր 2. Պետք է արդյո՞ք մարդիկ մասնակցեն կառավարության դեմ բողոքներին թե՝ ոչ և լրացուցիչ գործոնների վերլուծություն, %



Արդյունքների համաձայն՝ պետական հաստատությունների նկատմամբ վստահության ցածր մակարդակի և հակակառավարական բողոքի ակցիաներին մասնակցելու հավանականության միջև գոյություն ունի կապ: Բացի այդ, պետության ներքին կերպարի մասին կոլեկտիվ ընկալումները՝ պետությունն արդարացիորեն չի վերաբերվում հասարակ մարդկանց կամ պետական պաշտոնյաները արհամարհում են

շարքային անհատների կարծիքը, պայմանավորում են հակակառավարական ցույցերին մասնակցելու ցանկությունը, մինչդեռ տնտեսական պայմանները՝ ոչ: Սա ընդգծում է մոտիվացիայի սոցիալ-հոգեբանական ասպեկտի կարևորությունը, որն ավելի էական դեր է խաղում, քան տնտեսական գործոնները ժամանակակից Հայաստանյան հասարակության մեջ:

Ընդհանուր առմամբ, ձևավորվում է հակասական իրավիճակ. մի կողմից՝ մարդիկ տեսականորեն աջակցում են հակակառավարական բողոքի ակցիաներին, մյուս կողմից՝ նվազում է դրանցում մասնակցելու իրական պատրաստակամությունը: Սա վկայում է, որ հայաստանյան հասարակությունում առկա է բողոքի ներուժ, սակայն սահմանափակ են դրա մոբիլիզացիայի հնարավորությունները:

Եզրակացությունում համառոտ կերպով ամփոփվում են ատենախոսության արդյունքներն ու եզրահանգումները:

- Քանակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների առաջացման համար առկա է **ընդհանուր բողոքի ներուժը** (2021-ին 63%-ը, իսկ 2024-ին՝ 56%-ը համարում էր անհրաժեշտ մասնակցել հակակառավարական բողոքներին): Այնուամենայնիվ, այս ընդհանուր դժգոհությունը հաճախ չի վերածվում կոնկրետ սոցիալական շարժման**:** Դրա հիմնական պատճառներից է, որ բացակայում է ոչ միայն կոնկրետ, լայն հասարակական շերտերի կողմից ընդունված և լեգիտիմացված պահանջը, այլ նաև կազմակերպչական կարողությունը՝ դիֆուզ դժգոհությունը կոլեկտիվ գործողության վերածելու համար, բացակայում է հանրային առաջնորդական ներուժը, ինչպես նաև քաղաքական միջավայրը միշտ չէ որ բարենպաստ է:
- Հետազոտության արդյունքները հաստատում են, որ սոցիալական շարժում առաջանալու համար բավարար չէ պարզապես անարդարության ընկալումը. անհրաժեշտ է, որպեսզի հանրությունը վստահություն ունենա, թե կոլեկտիվ գործողությամբ հնարավոր է փոխել իրավիճակը, և ստանա հասարակական լեգիտիմություն:
- Արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումները հաճախ սկսվում են կոնկրետ նեղ խնդրից, սակայն արագորեն ընդլայնվում են և վերածվում համակարգային խնդիրների քննարկման հարթակների: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ տարբեր ոլորտներում առաջացող կոնֆլիկտները բխում են նույն խորքային խնդիրներից՝ պետական կառավարման անարդյունավետությունից, օրենքների ոչ հետևողական կիրառությունից և հանրային շահի անպաշտպան լինելուց: Այդ պատճառով տարբեր շարժումները, անկախ իրենց ուղղվածությունից և նեղ նպատակադրումից, փաստացի բարձրացնում են նույն հիմնարար հարցերը:
- Ժամանակակից հայաստանյան սոցիալական շարժումների կարևոր գործառույթներից մեկն այն է, որ դրանք կոմպենսացնում են պետական ինստիտուտների թերի կամ ոչ արդյունավետ գործառույթները, մասնավորապես՝ վերահսկողության,

հանրային շահի պաշտպանության և որոշումների հաշվետվողականության ապահովման ոլորտներում:

- Ուսումնասիրված բոլոր երեք շարժումները ֆրագմենտար են. ունեն ներքին բաժանումներ, մրցակցող օրակարգեր, կենտրոնացված ղեկավարության բացակայություն, ինչպես նաև կարճ ու ալիքաձև կյանքի ցիկլ: Ֆրագմենտարությունը թուլացնում է նրանց ազդեցությունն ու հասարակության մեջ ձևավորում «կոճակով միացնովի-անջատովի» կերպար: Ուսումնասիրված բոլոր երեք շարժումների ընդհանուր հատկանիշ է փոքրաթիվ կորիզը (10–20 ակտիվ անդամ), ապակենտրոնացված կառուցվածքը, ֆորմալ ղեկավարի բացակայությունը և կյանքի համեմատաբար կարճ ու ինտենսիվ ցիկլը:
- Սոցիալական մեդիան այն հիմնական հարթակն է, որը օգտագործվում է ոչ միայն հաղորդակցման, այլ նաև մոբիլիզացիայի և շարժման կոորդինացման համար: Շարժումների կազմավորումը մեծ չափով հիմնվում է սոցիալական կապիտալի՝ անձնական ծանոթությունների, ընկերական կապերի վրա: Կորիզի ձևավորման համար արդյունավետ են «ուժեղ» կապերը, սակայն շարժման ընդլայնման համար կարևոր են «թույլ» կապերը:
- Դիտարկված շարժումների արտաքին խոչընդոտների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում հասարակական ապատիան, կայունության կորստի վախը, ինչպես նաև հասարակության բացասական վերաբերմունքը և թերհավատությունը հենց շարժման կորիզի հանդեպ: Ներքին խոչընդոտներից ամենաէականներն են շարժման փոքրաթիվ լինելը, ինքնակամ քաղաքական մեկուսացումը, ինչպես նաև շարժման ներսում ռազմավարական ու գաղափարախոսական տարաձայնությունները, որոնք խոչընդոտում են շարժումների արդյունավետությանը:
- Հետազոտված սոցիալական շարժումների կյանքի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս դասական շարժումներին բնորոշ փուլայնություն: Շարժումներն առաջանում են արագ՝ կոնկրետ իրադարձության կամ որոշման հանդեպ արձագանքով: Ակտիվ փուլը բնութագրվում է ինտենսիվ մոբիլիզացիայով և կոլեկտիվ գործողություններով, սակայն տևում է համեմատաբար կարճ: Անկման փուլը գալիս է կա՛մ նպատակի իրացումից, կա՛մ ձախողումից հետո:
- Սոցիալական շարժումների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել կարևոր օրինաչափություն. շարժումների արժեքային հիմքը և զանգվածային մոբիլիզացիայի կարողությունը փոխկապակցված են: Դիտարկված շարժումների դեպքերը ցույց են տալիս, որ երբ շարժումների օրակարգը մեծապես պայմանավորված է արտաքին միջավայրից եկած արժեքներով և գլոբալացման գործընթացներով, առանց դրանց արմատավորման տեղական համատեքստում, այդ շարժումները դժվարությամբ են մոբիլիզացնում հասարակության լայն շերտեր:
- Մշակված փոփոխականների վերլուծությունը առ այն, թե ինչն է հանգեցնում շարժումների հաջողությանը, ցույց է տալիս, որ չորս փոփոխականները գործում են

հիերարխիկ կերպով. ներքին սոլիդարությունն ու հստակ նպատակադրումը շարժման գոյության նախապայմաններ են, մինչդեռ կազմակերպչական կարողությունն և սոցիալական միջավայրում նավարկելու կարողությունը որոշում է, թե արդյոք շարժումը կհաջողի հասնել իր նպատակին։

- Երկարաժամկետ հեռանկարում հայաստանյան սոցիալական շարժումների կայուն զարգացման հիմնական նախապայմանը կազմակերպչական կարողությունների ամրապնդումն է, արժեքների տեղայնացումը և հասարակական լեգիտիմության ձեռքբերումը։ Քանի դեռ շարժումները չեն կարողանում դիֆուզ դժգոհությունը վերածել կոնկրետ, շոշափելի և լայն հասարակական շերտերի կողմից ընդունելի պահանջի, սոցիալական շարժումները շարունակելու են մնալ անարդյունավետ։

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Քաղաքային շարժումն արդի հայաստանյան հասարակությունում. սոցիոլոգիական վերլուծություն» //Լրաբեր հասարակական գիտությունների, (2/674), ԳԱԱ, Երևան, էջ.161-174, 2025
2. «Barriers to Collective Mobilization: Understanding the Failure of Social Movements in Contemporary Armenian Society» // Region and World, Vol 2. pp. 175-182, 2025.
3. «Exploring social protest potential in modern Armenian society: institutional trust and social-demographic analysis» // Journal of Sociology, Bulletin of Yerevan State University, Vol. 15(2 (40), pp. 27-40, 2024.
4. «Narratives of environmental movement in contemporary Armenian society on the sample of online media analysis» // Современные медиакоммуникационные практики в цифровом мире, Казань, сс. 57-61, 2024
5. «Women's Rights Protection Social Movement in the Modern Armenian Society» // Journal of Sociology, Bulletin of Yerevan State University, Vol. 14 No. 2 (38), pp. 45-65, 2023.
6. «Researching social movements: methodological choice» // Journal of Sociology, Bulletin of Yerevan State University, Vol. 2, pp. 55-65, 2022.
7. «Mythologem of Armenian army in the context of antimilitary movements» // Вестник Российско-Армянского Университета», (серия: гуманитарные и общественные науки), соавтор А. Амбарцумян, (43) Издательство РАУ No 4 стр. 78-109, 2022.
8. «On the issue of social movement definition» // Journal of Sociology, Bulletin of Yerevan State University, Vol. 13 (1), pp. 62-75, 2021.

Арутюнян Гаяне Михайловна

Социальные движения в современном армянском обществе: социологический анализ

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 — «Методология, теории социологических исследований, социальные технологии и процессы».

Публичная защита диссертации состоится 29 мая 2026 года в 17:00 на заседании специализированного совета «Философия и социология», 013 КВОН РА, по адресу 0025, ул. Абовяна, 52а, ЕГУ.

Резюме

После обретения независимости современное армянское общество, находясь в процессе становления новой государственности и формирования новых социальных отношений, избрало демократическое развитие в качестве основного направления. Одной из важнейших характеристик этого пути является биполярность социального управления, предполагающая активное участие граждан в принятии государственных решений наряду с формальными государственными структурами. Иными словами, идеальная модель публичного управления должна включать как институты, реализующие государственную власть, так и активную гражданскую сферу. Социальные движения выступают одним из ключевых инструментов реализации такой модели, позволяя различным социальным группам выражать свои интересы и искать решения через коллективные действия. Однако, несмотря на растущую значимость в современном социально-политическом ландшафте Армении, социальные движения остаются недостаточно изученными в социологическом понимании.

Данная диссертация направлена на восполнение этого пробела посредством анализа и систематизации социальных движений в контексте современного армянского общества.

В исследовании применяется смешанный методологический подход, сочетающий конструктивистско-интерпретативные основания с эмпирическим полевым исследованием. Основной методологией является кейс-стади, включающий качественные глубинные интервью, нарративные интервью с участниками движений, а также анализ документов. В рамках кейс-стади рассматриваются три отдельных случая: феминистское, урбанистическое и экологическое движения. Дополнительно используются количественные данные опросов CRRC «Caucasus Barometer» (2022, 2024) для понимания более широкого социального контекста, в котором возникают и развиваются социальные движения.

Аналитическая рамка исследования построена на модели WUNC Чарльза Тилли (Worthiness, Unity, Numbers, Commitment), которая была расширена за счёт четырёх дополнительных переменных, выявленных на основе эмпирических данных — постановка целей, внутренняя солидарность, организационная способность и социальный контекст, — что позволило провести более комплексный анализ каждого кейса.

Результаты исследования выявляют ряд взаимосвязанных закономерностей, характеризующих социальные движения в современной Армении. Во-первых, несмотря на значительный протестный потенциал армянского общества, социальные движения сталкиваются с серьёзными трудностями как на этапе возникновения, так и при достижении своих целей. Основными препятствиями выступают дефицит организационной способности и зачастую неблагоприятный социальный контекст.

Согласно результатам социальные движения в значительной степени фрагментированы и децентрализованы, демонстрируя волнообразный жизненный цикл, а не устойчивую и непрерывную динамику. Для них характерны отсутствие централизованного лидерства, преобладание онлайн-активности над офлайн-формами участия, а также уязвимость как к внутренним конфликтам, так и к внешнему давлению, что в совокупности затрудняет их функционирование в социальной среде.

Исследование выявляет социальный капитал как ключевой принцип организации формирования и мобилизации движений. В частности, внутреннее ядро движений формируется за счёт «сильных» связей — основанных на доверии сетей близких отношений, — тогда как расширение и выход на более широкие аудитории обеспечиваются «слабыми» связями, выступающими мостами к более широким социальным кругам и слабо связанным сообществам.

Наконец, анализ выявляет ключевые переменные, определяющие успех социальных движений: организационная способность и благоприятный социальный контекст. Без чёткой целевой ориентации и внутренней солидарности движения не способны возникнуть; без развитых организационных навыков и благоприятного контекста — не способны добиться успеха. Эти выводы подчёркивают, что судьба социальных движений в Армении определяется не отсутствием гражданской воли, а структурными и организационными условиями.

Gayane Mikhail Harutyunyan

Social movements in contemporary Armenian society. Sociological analysis

Dissertation submitted for receiving academic degree of the doctor of sociology under the specialty 22.00.01- "Methodology of sociological research, theories, social technologies and processes"

The public defense of the dissertation will take place on May, 29th, 2026, at 17:00 at the session of SCC "Philosophy and Sociology", Specialized Council 013 based in YSU

Address: 0025, 52a Abovyan str. YSU

SUMMARY

After years of independence, modern Armenian society - being in the process of building a new statehood and new social relations — chose democratic development as its guiding path. One of the most important features of this path is the bipolarity of social governance, which implies the active participation of citizens in state decision-making alongside formal state structures. In other words, an ideal model of public governance would consist of both institutions implementing state power and an active civic sphere. Social movements are one of the key instruments through which such a model can be realized, enabling different social groups to voice their concerns and seek solutions through collective action. Yet despite their growing prominence in contemporary Armenian societies socio-political landscape, social movements remain insufficiently studied in a systematic, sociologically grounded manner.

This dissertation addresses that gap by analyzing and systematizing social movements in the context of contemporary Armenian society.

The dissertation adopts a mixed-method approach, combining constructivist-interpretive foundations with empirical field research. The core methodology is case study, encompassing qualitative in-depth interviews, narrative interviews with movement participants, and document analysis. The case study includes three cases: feminist, urban and ecological movement. Additionally, quantitative data from the CRRC Caucasus Barometer (2022, 2024) were analyzed in order to understand the broader social context in which social movements emerge and unfold across their life cycle.

The analytical framework of the research is built upon Charles Tilly's WUNC model (Worthiness, Unity, Numbers, Commitment), which was expanded with four additional variables derived from the empirical data — goal-setting, inner solidarity, organizational capacity, and social context — enabling a more comprehensive and nuanced analysis of each case.

The findings of the research reveal several interconnected patterns characterizing social movements in contemporary Armenia. First, while Armenian society demonstrates a considerable potential for protest, social movements consistently face significant difficulties in both emerging

and achieving their objectives. The primary obstacles are identified as a deficit of organizational capacity and an often-unfavorable social context.

Armenian social movements are found to be largely fragmented and decentralized, exhibiting a wave-like life cycle rather than a continuous and sustained dynamics. They are characterized by the absence of centralized leadership, a predominance of online over offline presence, and vulnerability to both internal tensions and external pressures, which together make navigation through the social environment challenging.

The research identifies social capital as the core organizing principle of movement formation and expansion. Specifically, movements tend to build their inner core through strong ties — dense, trust-based networks of close relationships — while reaching broader publics and expanding their base through weak ties, which serve as bridges to wider social circles and loosely connected communities.

The main motivational force driving participation in social movements is the perception of injustice on the part of state authorities, combined with a growing civic consciousness — the belief among citizens that they possess the legitimate power and responsibility to participate in shaping public decisions.

The research also demonstrates that the value base of social movements and their capacity for mass mobilization are deeply interconnected. The analysis of the studied cases reveals that when the agenda of a movement is predominantly shaped by values imported from the external environment and global processes — without being adequately rooted in the local social and cultural context — the movement encounters significant difficulties in mobilizing broad layers of society.

Finally, the analysis identifies the key variables determining movement success as organizational capacity and a conducive social context. Without goal orientation and inner solidarity, movements are unable to emerge; and without bold organizational skills and favorable social context they are unable to succeed. These findings underscore that the fate of social movements in Armenia is determined not by the absence of civic will, but by structural and organizational conditions.